ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

# "Shirakatsy Lyceum" International Scientific-Educational Complex



ROUND SQUARE

CIS MEMBER

"Shirakatsy Lyceum"
International Scientific-Educational Complex

# «ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

## ՄԲ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**2025-2026**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փիլիսոփայություն 2
2. Նպատակներ և սկզբունքներ 3
3. Գնահատման փուլեր 5
4. ՄԲ գնահատումը 5
5. Ճեմարանական գնահատում 6
6. Ստանդարտացում 16
7. Գնահատում, վարկանիշավորում, պարգևատրում և արդյունքների ամփոփում 17
8. ՄԲ և պետական դիպլոմի գնահատման համակարգը 21
9. Արդյուքների արձանագրում և հաշվետվություն 21
10. Վերջնաժամկետների պահպանում 23
11. Առնչություններ կրթական քաղաքականությունների միջև 23
12. Դերեր և պարտականություններ 25
13. Հղումներ 29
14. Հավելվածներ **29**

## 1. Փիլիսոփայություն

Գնահատումը Շիրակացու Ճեմարանում դիտարկվում է որպես կրթական գործընթացի հիմնարար բաղադրիչ, որը նպաստում է սովորողների ինքնաճանաչողության խորացմանը և միջազգային մտածողությամբ անհատների ձևավորմանը: Ճեմարանի գնահատման մոտեցումները համահունչ են Միջազգային Բակալավրիատի (ՄԲ) սկզբունքներին՝ ընդգծելով գնահատման իրական և հավաստի լինելը, սովորողի նախաձեռնողականությունը, ՈւՄ (ATL) հմտությունների զարգացումը և արդարության ապահովումը: Մեր համոզմամբ, գնահատումը պետք է.

1.1. նպաստի սովորողի ուսումնառության արդյունավետությանը և անհատական զարգացմանը՝ ապահովելով շարունակական և իմաստալից հետադարձ կապ,

1.2. ծառայի ուսուցման գործընթացի բարելավմանը՝ հիմնվելով տվյալների վրա հիմնված վերլուծությունների և եզրակացությունների վրա,

1.3. արտացոլի միջազգային մտածողության սկզբունքները և նպաստի ՄԲ Սովորողի նկարագրի (IB Learner Profile) դրսևորմանը,

1.4. իրականացվի չափանիշահեն մոտեցմամբ՝ ապահովելով վավերականություն, արդարություն և թափանցիկություն,

1.5. խրախուսի սովորողներին դառնալու ակտիվ և պատասխանատու մասնակիցներ գնահատման ամբողջական գործընթացում:

## 2. Նպատակներ և սկզբունքներ

### 2.1. Գնահատման նպատակները

2.1.1. Խթանել աշակերտների ակադեմիական առաջընթացը նախօրոք պատրաստված և սաներին իրազեկված որոշակի/պարզ գնահատման չափանիշների միջոցով:

2.1.2. Խթանել կրթական խրախուսանքները, ինչպես նաև ձևավորել ցկյանս կրթվելու ձգտումը:

2.1.3. Ապահովել անդրադարձ և հետադարձ կապ ուսուցիչների և աշակերտների միջև:

2.1.4. Ապահովել գնահատման տվյալների կիրառումը՝ ուսուցման պլանավորման և տարբերակված մոտեցումների իրականացման նպատակով:

2.1.5. Կիրառել անդրադարձ և վերլուծություն՝ որպես ուսուցման և ուսումնառության անբաժանելի և կարևորագույն բաղադրիչներ:

2.1.6. Արձանագրել աշակերտի ձեռքբերումների մակարդակը:

2.1.7. Ապահովել ԲՈՒՀ-ի ընդունելության քննությունների պահանջներին համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայություն:

---

### 2.2. Գնահատման սկզբունքները

2.2.1. 2.2.1. ԴԾ գնահատումը սատարում է կրթակարգի ուսումնական և փիլիսոփայական նպատակների իրագործմանը՝ լսարանում արդյունավետ գործնական աշխատանք կազմակերպելու և սովորողներին ոգևորելու միջոցով:

2.2.2. 2.2.2. ԴԾ գնահատման արդյունքները հուսալի են և համապատասխանում են բարձրակարգ բուհերի ընդունելության չափանիշներին:

2.2.3. 2.2.3. ԴԾ գնահատումը միջազգային մտածելակերպի արտացոլումն է և նպաստում է ՄԲ սովորողի նկարագրի ձևավորմանը:

2.2.4. 2.2.4. ԴԾ գնահատումը կարևորում է ոչ միայն հիմնական ճանաչողական հմտությունների, այլ նաև խոր գիտելիքների ձեռքբերումը և մտածական հմտությունների զարգացումը:

2.2.5. 2.2.5. Յուրաքանչյուր առարկայի գնահատումը ներառում է չափանիշների հիման վրա կազմված առաջադրանքների և գործիքների/բաղադրիչների մի շարք, որոնք ապահովում են առարկայի բոլոր նպատակների իրականացումը: (Հավելված 1).

2.2.6. Գնահատումը բազմակողմանի համագործակցային գործընթաց է, որը ներառում է ուսուցիչների միասնական մոտեցումը, սովորողների անդրադարձը իրենց առաջընթացին և շարունակական հետադարձ կապը:

2.2.7. Ուսուցիչները նպատակադրված գնահատման ռազմավարություններն ազատորեն ընտրելու իրավունք ունեն՝ կիրառելով անհատական կամ խմբակային գնահատման տեսակները:

2.2.8. Գնահատման սկզբունքները հետևողականորեն և շարունակաբար կիրառվում են ՄԲ կրթական շղթայի ընթացքում(MYP–DP)՝ ապահովելով սահուն անցումներ և համահունչ ակնկալիքներ:

2.2.9. Գնահատման արդյունքները կանոնավոր կերպով վերլուծվում են՝ առարկայական խմբերի, տարիքային խմբերի և անհատ սովորողների կատարողականի միտումները բացահայտելու համար: Ստացված

տվյալները կիրառվում են ուսուցիչների և համակարգողների կողմից՝ ուսուցման ռազմավարությունները, խմբավորումները, միջամտությունները և դասավանդման պլանավորումը համապատասխանեցնելու նպատակով:

2.2.10. Դպրոցը հստակ տարբերակում է ներդպրոցական գնահատումները և ՄԲ-ի կողմից սահմանված պաշտոնական գնահատումները: Զնայած Շիրակացու ճեմարանի ներդպրոցական ամփոփիչ առաջադրանքները համահունչ են ՄԲ չափորոշիչներին, այնուամենայնիվ միայն ՄԲ-ի կողմից սահմանված ներքին գնահատումներն ու քննություններն են որոշիչ դառնում վերջնական գնահատականի համար:

2.2.11. Ուսուցիչները լսարանում ներկայացնում են պաշտոնական ակնկալիքները՝ նպաստելով սովորողներին հաջողության հասնելու թե՛ ներդպրոցական, թե՛ միջազգային գնահատման համատեքստերում:

**3.** Գնահատման փուլեր

Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի.

3.1. գնահատում. ինչպե՞ս ենք բացահայտում՝ ի՛նչ գիտեն և ի՛նչ են սովորել սաները,

3.2. գրանցում. ինչպե՞ս ենք հավաքում, վերլուծում և ամփոփում տվյալները,

3.3. հաշվետվություն. ինչպե՞ս ենք ներկայացնում տեղեկությունը կամ գնահատման արդյունքները:

**4.** ՄԲ գնահատումը

ՄԲ-ն առաջարկում է կիրառել գնահատման երկու տեսակ՝ ներքին և արտաքին:

4.1. ՄԲ դասընթացների համար պահանջվում է ներքին գնահատման բաղադրիչի կատարում: Ներքին գնահատումը իրականացնում է դպրոցը, բայց միավորների միջինացումն իրականացնում է ՄԲ-ի գրասենյակը: Լրացուցիչ տեղեկությունը հասանելի է Առարկայական ուղեցույցում և Հավելված 1-ում:

4.2. Ճեմարանում յուրաքանչյուր ուսումնական տարում ՄԲ ԴԾ համակարգողի և առարկայական ուսուցիչների համագործակցությամբ մշակվում է ներքին գնահատումների միասնական օրացույց: Այն ապահովում է սովորողների աշխատանքային ծանրաբեռնվածության հավասարաչափ բաշխումը և բավարար ժամանակ է տալիս ուսուցիչներին գնահատումների հավաստիությունը ստուգելու, հետադարձ կապ տրամադրելու և սահմանված ժամկետներում դրանք ՄԲ ներբեռնելու:

4.3. Արտաքին գնահատումն իրականացվում է Միջազգային Բակալավրիատի (ՄԲ) գրասենյակի կողմից. սա հիմնականում որակավորման ցուցիչ է բուհի ընդունելության համար: Լրացուցիչ տեղեկությունը հասանելի է Առարկայական ուղեցույցում և Հավելված 1-ում:

4.4. ՄԲ ավարտական քննությունները անցկացվում են ՄԲ պահանջներին համապատասխան ավագ դպրոցի 12-րդ դասարանում մայիս ամսին: Արդյունքները հրապարակվում են հուլիսի 6-ին: (www.candidates.ibo.org).

4.5. Արտաքին գնահատումը (քննություններ) անցկացվում է ընտրված վեց առարկաներից, այդ թվում՝ Ծավալուն էսսեից (EE) և Իմացության տեսությունից (TOK):

4.6. Դիմորդները կարող են բողոքարկել վերջնական գնահատականը ՄԲ–ում կամ վերահանձնել ՄԲ վերջնական գնահատականի մեկ կամ ավելի բաղադրիչ՝ համաձայն «Դիպլոմային ծրագիր. Գնահատման ընթացակարգ» փաստաթղթի:

## 5. Ճեմարանական գնահատում

Ճեմարանում կիրառվում են գնահատման երկու տեսակ. ձևավորիչ և ամփոփիչ:

Բոլոր սովորողներից ակնկալվում է, որ ձևավորող և ամփոփիչ հիմնական գնահատումներից հետո իրականացնեն կառուցվածքային անդրադարձ: Ուսուցիչները տրամադրում են անդրադարձի ձևանմուշներ, որոնք համահունչ են ՈւՄ (ATL) հմտություններին և առարկայական նպատակներին՝ խթանելով մետակոգնիտիվ կարողությունների զարգացումը և սովորողի ինքնուրույնությունը:

### 5.1. Ձևավորող գնահատում

#### 5.1.1. Ձևավորող գնահատման նպատակը

5.1.1.1. Ձևավորող գնահատումը տեղեկություններ, փաստեր հավաքելու, դրանք կիրառելու, վերլուծելու, բացատրելու և անդրադարձ կատարելու գործընթաց է, որն օգնում է սովորողին բարելավելու ուսումնական գործընթացը և հասնելու լավագույն արդյունքների:

5.1.1.2. Ձևավորող գնահատումը խթանում է սովորողների մոտիվացիան ուսուցման և ուսումնառության գործընթացում, հնարավորություն է ընձեռում պատշաճ ձևով ներկայացնելու ձեռքբերումները և նպաստում է ինքնագիտակցության և ինքնակառավարման զարգացմանը:

5.1.1.3. Ձևավորող գնահատումը նպատակ ունի ապահովելու արդյունավետ հետադարձ կապ. սա սովորողին հնարավորություն է տալիս տեղեկացված լինելու ուսումնառության ընթացքում ձեռքբերումների, արդյունքների և բացթողումների մասին: ՁԳ օգնում է սովորողներին հասկանալու իրենց ուժեղ կողմերը և ցույց է տալիս այն միջոցները, որոնց կիրառությամբ կարելի է զրանցել կրթական առաջընթաց:

5.1.1.4. Արդյունավետ հետադարձ կապը պետք է լինի ժամանակին, հստակ և կառուցողական: Ուսուցիչները պարտավոր են այն կիրառել ոչ միայն գնահատականները հիմնավորելու, այլև սովորողների առաջընթացը ուղղորդելու և Ում (ATL) հմտությունների զարգացմանը նպաստելու համար: Սովորողներին հնարավորություն է տրվում արձագանքելու հետադարձ կապին և անհրաժեշտության դեպքում վերանայելու ու բարելավելու իրենց աշխատանքները:

5.1.1.5. Սովորողների առաջընթացին հետևելու, ակադեմիական ազնվությունը պահպանելու և թափանցիկ հետադարձ կապ ու անդրադարձ տրամադրելու համար օգտագործվում են թվային հարթակներ, ինչպիսիք են՝ ManageBac, Turnitin, էլեկտրոնային պորտֆոլիոներ և այցանց չափորոշիչներ:

5.1.1.6. Բացի այդ, սովորողները ներգրավվում են գնահատման գործընթացի համակազմման մեջ. նրանք մասնակցում են չափորոշիչների համատեղ մշակմանը, գնահատման օրացույցների վերաբերյալ կարծիքների ներկայացմանը և ձևավորող առաջադրանքների նախագծմանը: Այս մոտեցումը խթանում է սովորողների ձայնի ակտիվ դրսևորումը իրենց ուսումնական ուղին ձևավորելու ընթացքում::

5.1.1.7. Ձևավորող գնահատումը կիրառվում է ՄԲ սովորողների՝ ամսական ամփոփման ընթացքում հանրային ծառայության (CAS) իրականացումը գնահատելու համար (Հավելված 4.2):

5.1.1.8. Ձևավորող գնահատումը իրականացնելիս առավել կարևոր է հեզրիտ նախանշել սովորողի գիտելիքի, ըմբռնողության, հմտությունների զարգացման հնարավորությունները, քան որոշել յուրաքանչյուր աշակերտի ձեռքբերումների մակարդակը: ((Diploma Programme Assessment Principles and practice, 2019, Updated May 2025).

### 5.1.2. Ձևավորող գնահատման առաջադրանքները

ԴԾ-ում որպես ձևավորող գնահատման առաջադրանքներ կիրառվում են.

5.1.2.1. Քննարկումներ, հայտորոշիչ թեստավորում, բանավոր ներկայացում, հարցաշար, լուծումներ պահանջող խնդիրներ, դիագրամներ, ելքի տոմս, խմբակային/զույգերով համագործակցային աշխատանք, լաբորատոր աշխատանք, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, բղբապանակ, պաստառ, ինֆոգրաֆիկ հարցաշարեր, Վեննի դիագրամ, ադյուսակներ, SEEP վերլուծություններ, KWL անդրադարձներ, SWOT վերլուծություններ, Ֆրայերի

աղյուսակներ, հասկացության արտացոլումը քարտեզավորման միջոցով, Կորնելի նշումներ և այլն:

5.1.2.2. Ձևավորող գնահատման տեսակները

5.1.2.3. Ճեմարանում կիրառվում են երկու տեսակի ձևավորող գնահատում՝ կշիռ չունեցող և կշիռ ունեցող:

5.1.2.4. Կշիռ չունեցող ձևավորող գնահատումը կիրառվում է զարգացնելու համապատասխան հմտությունները և աջակցում աշակերտներին ուսումնառության գործընթացում:

5.1.2.5. Կշիռ ունեցող ձևավորող գնահատումը նպատակ ունի որոշակի ժամանակահատվածի համար ամփոփելու ձեռքբերված գիտելիքները և հմտությունները՝ ուսուցումը սովորողների կարիքներին համապատասխանեցնելու համար:

5.1.2.6. Կշիռ ունեցող ձևավորող գնահատման ընդհանուր կուտակային միավորը կազմում է կիսամյակի ընթացքում ձեռքբերված միավորների միջին գնահատականի 10%:

5.1.2.7. Առնվազն երկու ձևավորող գնահատում պետք է իրականացնել յուրաքանչյուր թեմատիկ կամ ամփոփիչ աշխատանքից առաջ:

5.1.2.8. Բաց թողած կշիռ ունեցող ձևավորող աշխատանքների լրացում չի կազմակերպվում և աշակերտը գնահատվում է N/A, սակայն աշակերտներին հնարավորություն է տրվում լրացնելու առաջին բաց թողած աշխատանքը և ստանալու հետադարձ կապ ուսուցիչների կողմից: Երբ աշակերտը նույն կիսամյակի ընթացքում բաց է թողնում նաև երկրորդ և երրորդ ձևավորող աշխատանքը նույն առարկայից, նա մեխանիկորեն գնահատվում է մեկ (1): Հատուկ դեպքերը ենթակա են մանկավարժական առաջնորդության քննարկմանը:

5.2. Թեմատիկ գնահատում

Ճեմարանում յուրաքանչյուր ուսումնական տարում ՄԲ ԴԾ համակարգողի և առարկայական ուսուցիչների համագործակցությամբ մշակվում է ներքին գնահատումների միասնական օրացույց: Այն ապահովում է սովորողների աշխատանքային ծանրաբեռնվածության հավասարաչափ բաշխումը և բավարար ժամանակ է տալիս ուսուցիչներին գնահատումների հավաստիությունը ստուգելու, հետադարձ կապ տրամադրելու և սահմանված ժամկետներում դրանք ՄԲ ներբեռնելու:

5.2.1. Թեմատիկ գնահատման նպատակը

5.2.1.1. Թեմատիկ գնահատումը (նաև Թեմատիկ) իրականացվում է՝ որոշելու աշակերտների ձեռքբերումների/առաջընթացի մակարդակը:

5.2.1.2. Թեմատիկ աշխատանքները նպատակ ունեն աշակերտներին առավելագույնս պատրաստելու արտաքին գնահատման, ինչպես նաև աշակերտների առաջադիմության ցուցիչի դեր են կատարում:

5.2.2. Թեմատիկ գնահատման առաջադրանքները

Դիպլոմային Ծրագրում կիրառվում են Թեմատիկ գնահատման հետևյալ առաջադրանքները՝

5.2.2.1. Էսսե, կարճ/համառոտ հարց-պատասխան, փաստերի հիման վրա տրվող հարցեր, տեքստային պատասխան ունեցող հարցեր, կոնկրետ դեպքի ուսումնասիրությանը վերաբերող հարցեր, տարբերակներով հարցեր, տեսա կամ վիզուալ պատկերների վերլուծություն, խնդրի լուծում պահանջող առաջադրանքներ, նախագծեր, քննարկումներ, բանավոր ելույթ-ներկայացում, զեկուցում, հարցաշար, լաբորատոր աշխատանքներ և այլն:

5.2.3. Թեմատիկ գնահատման ընթացակարգը

5.2.3.1. Հետազոտական յուրաքանչյուր միավոր ուղեկցվում է թեմատիկ աշխատանքով:

5.2.3.2. Առնվազն երկու թեմատիկ գնահատում պետք է իրականացնել յուրաքանչյուր ակադեմիական կիսամյակի ընթացքում:

5.2.3.3. Ամփոփիչ գնահատումների միջին արդյունքը կազմում է կիսամյակի վերջնական գնահատականի 75%-ը:

5.2.3.4. Կիսամյակային և փորձնական քննությունները ունեն նույն կշիռը, ինչ թեմատիկ գնահատումը:

5.2.3.5. Թեմատիկ գնահատման անցկացման ամսաթվերը պետք է նախօրոք նշվեն դպրոցի Գնահատման օրացույցում:

5.2.3.6. Սովորողները նախօրոք պետք է տեղեկացված լինեն առաջադրանքների ձևաչափի, հատկացված ժամանակի և չափանիշի, գնահատման սանդղակի (ռուբրիկի), ինչպես նաև Թեմատիկ գնահատման ակնկալվող արդյունքների մասին:

5.2.3.7. Թեմատիկ առաջադրանքների արդյունքները պետք է վերլուծել հաջորդ շաբաթվա ընթացքում և ապահովել համապատասխան հետադարձ կապը, գնահատականները/թվանշանները պետք է գրի առնել մատյանում:

5.2.3.8. Միավորի գնահատման վերջնաժամկետը կարող է լինել առարկայի նախավերջին դասը:

5.2.3.9. Թեմատիկից անհարգելի բացակայությունների դեպքում աշակերտը մեխանիկորեն ստանում է մեկ (1) գնահատական:

5.2.3.10. Միայն բացառիկ դեպքերում (օր.՝ առողջական կամ այլ արտակարգ իրավիճակների դեպքում) յուրաքանչյուր առարկայից կիսամյակային մեկ ամփոփիչ գնահատման լրացում կարող է կազմակերպվել՝ ԴԾ համակարգողի հաստատմամբ:

5.2.3.11. Լրացուցիչ ամփոփիչ գնահատման համար առարկայի ուսուցիչը պատրաստում է նոր թեստային աշխատանք:

5.2.3.12. Լրացուցիչ ամփոփիչ գնահատումները անցկացվում են մինչև հաջորդ ամփոփիչ գնահատումը. դրանց կազմակերպման պատասխանատուներն են ԴԾ տեսուչը, ԴԾ կազմակերպիչը և տվյալ առարկայի ուսուցիչը:

5.2.3.13. Չնախատեսված իրավիճակները և հանգամանքները, որոնք չեն կարգավորվում Գնահատման քաղաքականությամբ, ենթակա են ճեմարանում առկա հատուկ ընթացակարգի:

5.2.4. Կիսամյակային ամփոփիչ քննություններ/գնահատումներ

5.2.4.1. Առաջին կիսամյակի ավարտին կիսամյակային ամփոփիչ գնահատում/քննություն են հանձնում ինչպես ԴԾ 1, այնպես էլ ԴԾ 2 խմբերի սովորողները:

5.2.4.2. Կիսամյակային ամփոփիչ գնահատում/ քննությունը ներառում է կիսամյակի ընթացքում ուսումնասիրված թեմաները և բաժինները:

5.2.5. Փորձնական քննություններ

5.2.5.1. Փորձնական գնահատում: Երկրորդ կիսամյակի ընթացքում (փետրվար 1-20) ավարտական խմբի աշակերտները հանձնում են իրենց Փորձնական քննությունները.

5.2.5.2. Արդյունքները համարվում են որպես երկրորդ կիսամյակի թեմատիկ գնահատման արդյունք:

5.2.5.3. Փորձնական քննությունների գնահատումն իրականացվում է Ծեմարանի ԴԾ գնահատման սանդղակով /տե՛ս հավելված 2/:

5.2.5.4. Փորձնական քննություններից բացակայելու դեպքում աշակերտը մեխանիկորեն ստանում է մեկ (1) գնահատական:

5.3. Գնահատման հավելյալ բաղադրիչներ

5.3.1. Ցուրացման առաջադրանք

5.3.1.1. Ցուրաքանչյուր դասարանում աշակերտներին հանձնարարվում է յուրացման պարտադիր առաջադրանք ավելի լավ ըմբռնելու/հասկանալու ուսումնասիրվող նյութը:

5.3.1.2. Այսպիսի առաջադրանքների կատարումը ստուգում է ուսուցիչը յուրաքանչյուր դասին և գրառումներ կատարում մատյանում:

5.3.1.3. Եթե աշակերտը չի ներկայացնում յուրացման աշխատանքի կատարումը երեք անգամ, ծնողին տեղեկացնում են չկատարված հանձնարարության մասին:

5.3.1.4. Ցուրացման առաջադրանքի կատարումը կազմում է կիսամյակային գնահատականի 5% :

5.3.2. Թղթապանակ

5.3.2.1. Ուսուցիչները կիրառում են թղթապանակները՝ գնահատելու աշակերտին և ուսումնական գործընթացը՝ համոզվելու համար, որ աշակերտները կարողանում են անդրադարձ կատարել իրենց առաջընթացին և հետևություններ անել:

5.3.2.2. Աշակերտներից պահանջվում է ստեղծել թղթապանակ յուրաքանչյուր առարկայի համար՝ հետևելով ուսուցչի առաջադրած չափանիշներին:

5.3.2.3. Թղթապանակները գնահատվում են կիսամյակը առնվազն մեկ անգամ: Սա կազմում է կիսամյակային գնահատականի 5 %:

5.3.3. Վարք և մասնակցություն

5.3.3.1. Աշակերտները գնահատվում են ամսական երկու անգամ՝ հիմք ընդունելով իրենց պատրաստվածությունը դասին, համագործակցությունը, ակտիվ մասնակցությունը, ՄԲ սովորողի նկարագրին համապատասխան որակների դրսևորումը:

5.3.3.2. Վարքը և մասնակցությունը կազմում են կիսամյակային գնահատականի 5%:

5.4. Քննություն

5.4.1. Տարեվերջյան քննություններ

5.4.1.1. Առաջին տարվա ավարտին (հունիս 3-20) ՄԲ աշակերտները հանձնում են տարեվերջյան քննություններ ընտրված 6 առարկաներից և ապահովում ճեմարանի ՄԲԴԾ ակադեմիական օրացույցով նախատեսված ԴԾ առանցքային բաղադրիչների(Core)՝ ծավալուն էսսեի (EE), Իմացության տեսության (TOK) և Հանրային ծառայության (CAS) պահանջները:

5.4.1.2. Տարեվերջյան քննությունը նպատակ ունի չափելու սովորողների՝ ողջ տարվա ընթացքում ուսուցանվող դասընթացի թեմաների ընդհանրական իմացությունը:

5.4.1.3. Քննությունը ներառում է արտաքին գնահատման ոճի հարցեր, ինչպես նաև ներքին գնահատման բաղադրիչներ: Տարեվերջյան քննությունները իրականացվում են համաձայն ՄԲ քննությունների ընթացակարգերի:

5.4.1.4. Տարեվերջյան քննության գնահատականը կազմում է տարեկան գնահատականի 33.(3) %:

5.4.2. Վերահանձնում

5.4.2.1. Եթե աշակերտը տարեվերջյան քննությունից հավաքում է ավելի քիչ, քան 50%, ապա նա պետք է վերահանձնի քննությունը: Այսպիսի վերահանձնման հնարավորությունը երկուսն են. Առաջին վերահանձնման արդյունքը (հունիս 15-30) կազմում է տարեկան գնահատականի 1/3ը (33.(3)%), այնուամենայնիվ, եթե աշակերտը հավաքում է ավելի քան 50% երկրորդ վերահանձնման ժամանակ (օգոստոս 20-27), վերահանձնման արդյունքը համարվում է տարեկան գնահատական:

5.4.2.2. Եթե սանը չի հաղթահարում երկրորդ վերահանձնումը, հարցը վերանայվում է ԴԾ մանկավարժական առաջնորդության նիստի ընթացքում և վերջնական որոշումը կայացվում է տնօրենության խորհրդի կողմից:

5.4.2.3. Տարեվերջյան քննություններից չորս և ավելի առարկաներից անբավարար գնահատական (ավելի քիչ քան 50%) ստացած աշակերտի՝ Դիպլոմային ծրագրում հետագա ուսումնառության հարցը քննարկվում է ԴԾ մանկավարժական առաջնորդության նիստի ընթացքում: Վերջնական որոշումը կայացվում է տնօրենության խորհրդի կողմից:

5.4.2.4. Եթե սանը տարեվերջյան քննություններից ստանում է դրական գնահատական, սակայն տարեկան վերջնական արդյունքը անբավարար է, նա պետք է վերահանձնի տվյալ առարկան՝ ըստ 5.4.2.1. կետի:

5.4.2.5. Վերահանձնման հետ կապված ցանկացած չնշված դեպք վերանայվում է ԴԾ մանկավարժական առաջնորդության և ճեմարանի տնօրենության խորհրդի կողմից:

5.4.3. Գնահատականի բարձրացում

5.4.3.1. Աշակերտներին հնարավորություն է տրվում բարձրացնել տարեվերջյան գնահատականը (հունիս 22-27):

5.4.3.2. Աշակերտը կարող է դիմել առավելագույնը երկու առարկայի տարեվերջյան գնահատականի բարձրացման համար:

5.4.3.3. Դիմումը անհրաժեշտ է ներկայացնել մինչև ընթացիկ ակադեմիական տարվա հունիսի 22-ը:

5.4.3.4. Որևէ առարկայից տարեվերջյան քննությունից անբավարար ստացած աշակերտները, չեն կարող դիմել գնահատականի բարձրացման:

5.4.3.5. Գնահատականի բարձրացման համար կազմված առաջադրանքները ձևաչափով տարբերվում են տարեվերջյան քննության առաջադրանքներից, որը յուրաքանչյուր առարկայի համար որոշում է դասավանդող ուսուցիչը նախքան գնահատականի բարձրացման համար գրանցվելու վերջնաժամկետը:

5.4.3.6. Արդյունքներից ամենաբարձրը ընդունվում է որպես տարեվերջյան գնահատական:

5.4.4. ՄԲ ԴԾ պաշտոնական վերջնական քննություններ

5.4.4.1. ՄԲ Դիպլոմային ծրագրի բոլոր սովորողները երկրորդ ուսումնական տարվա ընթացքում պարտավոր են ավարտին հասցնել ներքին գնահատման բոլոր բաղադրիչները, ներկայացնել Ընդլայնված էսսեն (EE), կատարել Իմացության տեսության (TOK) և Ստեղծագործություն, Գործունեություն, Ծառայություն (CAS) պահանջները, ինչպես նաև մասնակցել ՄԲ Դիպլոմային ծրագրի պաշտոնական քննություններին իրենց ընտրած վեց առարկաներից՝ ՄԲ ԴԾ ուսումնական օրացույցին, ժամանակացույցին և կանոնակարգին համապատասխան:

5.4.5. ՄԲ ԴԾ պաշտոնական վերջնական քննությունների վերաքննություններ

5.4.5.1. Սովորողները կարող են գրանցվել որպես վերաքննության (retake) մասնակիցներ ցանկացած հաջորդ քննաշրջանում (մայիսին կամ նոյեմբերին)՝ ՄԲ կանոնակարգին համապատասխան:

- Մայիսյան քննաշրջան (արդյունքները հրապարակվում են հուլիսի 6-ին)
- Նոյեմբերյան քննաշրջան (արդյունքները հրապարակվում են դեկտեմբերի 16-ին)

5.4.5.2. Վերաքննության մասնակիցները կարող են կրկնել մեկ կամ մի քանի առարկա կամ Հիմնական բաղադրիչները (EE, TOK կամ CAS՝ անհրաժեշտության դեպքում):

5.4.5.3. Վերաքննությունների քանակի սահմանափակում չկա՝ պայմանով, որ ուսանողը շարունակի բավարարել ՄԲ գրանցման պահանջները:

5.4.5.4. Վերաքննության բոլոր դիմումները պետք է ներկայացվեն ԴԾ համակարգողին՝ ՄԲ և ճեմարանի կողմից սահմանված վերջնաժամկետներում:

5.4.5.5. Վերաքննության հետ կապված ՄԲ բոլոր վճարները հոգում է սովորողի ընտանիքը:

5.4.5.6. ԴԾ համակարգողը ապահովում է, որ վերաքննության բոլոր մասնակիցները ստանան ակադեմիական խորհրդատվություն ու աջակցություն՝ իրենց քննություններին պատրաստվելու համար::

Նշում. Վերաքննության գրանցումները ենթակա են ՄԲ կանոնակարգին՝ առարկաների հասանելիության, բաղադրիչների վավերականության և Հիմնական պահանջների կատարման առումով:

### 5.4.6. Արդյունքների վերաբերյալ հարցում (Enquiry Upon Results, EUR)

5.4.6.1. ՄԲ Դիպլոմային ծրագրի վերջնական արդյունքների հրապարակումից հետո (հուլիսի 6-ին, www.candidates.ibo.org) սովորողները կարող են ներկայացնել «Արդյունքների վերաբերյալ հարցում» (EUR), եթե ցանկանում են, որ իրենց արտաքին գնահատման բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը ՄԲ կանոնակարգին համապատասխան վերագնահատվեն կամ վերամոդերացվեն:

5.4.6.2. EUR-ի դիմումները պետք է գրավոր ներկայացվեն ԴԾ համակարգողին՝ ՄԲ-ի կողմից սահմանված ժամկետում (սովորաբար արդյունքների հրապարակումից 14 օրվա ընթացքում):

5.4.6.3. Դպրոցը սովորողներին և նրանց ծնողներին տրամադրում է ՄԲ համապատասխան տեղեկատվությունը՝ ներառյալ EUR-ի հնարավոր արդյունքները (գնահատականը կարող է բարձրանալ, նվազել կամ մնալ անփոփոխ):

5.4.6.4. EUR-ի հետ կապված բոլոր ՄԲ վճարները հոգում է սովորողի ընտանիքը: ԴԾ համակարգողը պարտավորվում է IBIS համակարգի միջոցով ներկայացնել դիմումը և հնարավորինս շուտ արդյունքի մասին տեղեկացնել սովորողին և ծնողներին:

Նշում. EUR-ի դիմումը ներկայացնելուց հետո այն հետ կանչել հնարավոր չէ, նույնիսկ եթե գնահատականը նվազի:

## 6. Ստանդարտացում

Այն դեպքերում, երբ մեկից ավելի ուսուցիչներ դասավանդում է նույն առարկան կամ նույն առարկայական խմբի ուսուցիչները դասավանդում են նույն տարիքային խմբերում, առաջադրանքների բովանդակությունը, գնահատման սանդղակը (ռուբրիկը), թեմատիկների և ձևավորող գնահատման արդյունքները ենթակա են ներքին ստանդարտացման՝ պահովելով չափանիշների ընկալման և կիրառության համաչափությունը:

6.1. Ստանդարտացման նպատակները

6.1.1. Ապահովել վստահելի/հուսալի, վավեր և թափանցիկ գնահատում:

6.1.2. Ապահովել/երաշխավորել ընդհանուր ըմբռնումը, մեկնաբանումը և գնահատման չափանիշի կիրառումը:

6.1.3. Ապահովել միասնական մոտեցում ուսումնական և գնահատման գործընթացում:

6.1.4. Մշտադիտարկել գնահատման գործիքները, սանդղակը (ռուբրիկը), մեթոդները և դրանց արդյունավետությունը:

6.2. Ստանդարտացման գործընթացի մասնակիցները

6.2.1. Ուսուցիչները

6.2.2. Դպրոցի ղեկավարը, աշակերտները, ծնողները, տնօրենը, անհրաժեշտության դեպքում նաև համակարգողները:

6.3. Ստանդարտացման հաճախականությունը

6.3.1. Ստանդարտացումը յուրաքանչյուր կիսամյակում իրականացվում է 2-3 անգամ և ըստ անհրաժեշտությունը:

6.4. Ստանդարտացման ընթացակարգը

6.4.1. Առարկայական խմբերում և նույն առարկաների տիրույթում, ստանդարտացման գործընթացը սկսվում է հետազոտական միավորի պլանավորման հետ մեկտեղ. բոլոր հետազոտական միավորները ներառում են ձևավորող և թեմատիկ առաջադրանքներ՝ համապատասխան գնահատման գործիքներով և ռազմավարությամբ, ինչպես նաև միջառարկայական գնահատման պլանավորում: Գնահատման ժամանակաշրջանում վերոնշյալ ուսուցիչները գնահատում են պատահականության սկզբունքով ընտրված 4 կամ 5 աշխատանք, այնուհետև ամփոփում են արդյունքները, քննարկում և անհրաժեշտության դեպքում վերափոխում գնահատման սահմանները: Վերջում լրացնում են ստանդարտացման ձևանմուշը և ստորագրում (Հավելված 6):

## **7.** Գնահատում, վարկանիշավորում, պարգևատրում և արդյունքների ամփոփում

7.1. Ընդհանուր գնահատման համակարգ

7.1.1. Գնահատման համար սահմանվում է 1 մինչև 7 միավորանոց գնահատման սանդղակ (հավելված 2):

7.1.2. 1-ից մինչև 3 միավորը համարվում է անբավարար:

7.1.3. Սովորողի աշխատանքը ավտոմատ կերպով զրո **(0)**՝ է գնահատվում ակադեմիական ազնվությունը խախտելու դեպքում (տե՛ս «Ակադեմիական ազնվության քաղաքականություն»):

7.1.4. ՄԲ գնահատումների շրջանակում ակադեմիական ազնվության խախտման կասկածի դեպքում ԴԾ համակարգողը նախաձեռնում է ներքին քննություն՝ հետևելով ՄԲ Ակադեմիական ազնվության քաղաքականության մեջ նշված ընթացակարգերին: Սա ներառում է սովորողին տեղեկացնելը, ապացույցների հավաքագրումը և անհրաժեշտության դեպքում ՄԲ-ին պաշտոնական զեկույցի ներկայացումը:

7.1.5. Սովորողի աշխատանքը ավտոմատ զրո **(0)**՝ է գնահատվում վերջնաժամկետը չպահպանելու դեպքում:

7.2. Կիսամյակային գնահատականի հաշվարկ

7.2.1. Կիսամյակային վերջնական գնահատականը հաշվարկվում է հետևյալ կերպ. վերցվում է սովորողի ստացած բոլոր ամփոփիչ գնահատականների միջինը (որոնք կազմում են ընդհանուրի **75%**), որին ավելացվում է ձևավորիչ բաղադրիչների կուտակային գումարը՝ յուրացման աշխատանք **(5%)**, պորտֆոլիո **(5%)**, մասնակցություն և վարքագիծ **(5%)** և ձևավորող առաջադրանքներ **(10%)**: Այս բոլոր բաղադրիչները միասին կազմում են գնահատականի **25%**-ը (տե՛ս Հավելվածներ 3 և 4.1):

7.2.2. Եթե բացակայությունները գերազանցում են առարկայի համար սահմանված ժամաքանակի 15%-ը, ապա տվյալ առարկայի կիսամյակային գնահատականից հանվում է մեկ միավոր:

7.3. Վերջնական գնահատականի հաշվարկ

7.3.1. ՄԲ առարկայից տարեկան վերջնական գնահատականին հասնելու համար անհրաժեշտ է միացնել ակադեմիական կիսամյակների և վերջնական քննության միջին գնահատականը /տե՛ս հավելված 3/:

7.3.2. Ոչ ՄԲ խմբերի համար տարեկան միջին գնահատականը պետք է համարել վերջնական գնահատական:

7.3.3. Եթե սովորողը բարձրացնում է որևէ առարկայի գնահատականը, ապա նրա վերջնական տարեկան գնահատականը համարվում է փոփոխվածը, եթե այն ավելի բարձր է (տես հոդված 5.4.3.6):

7.3.4. Եթե սովորողը վերաքննություն է հանձնում, ապա տարեկան գնահատականը հաշվարկվում է 5.4.2.1 կետի համաձայն:

7.4. Կանխատեսելի գնահատականներ

7.4.1. Կանխատեսելի գնահատականները տրվում են երեք անգամ (սեպտեմբեր, հունվար և մարտ ամիսներին) ՄԲ երկրորդ/ավագ դպրոցում (12-րդ դասարանում): Ուսուցիչները կանխատեսումներ են անում՝ հիմք ունենալով իրենց մասնագիտական դատողությունը և աշակերտների առաջադիմությունը:

7.5. Վարկանիշավորում և պարգևատրում

7.5.1. Աշակերտների վարկանիշավորումը հաշվարկվում է՝ նույն ավարտական տարվա ընթացքում աշակերտների հավաքած վերջնական միավորների համաձայն:

7.5.2. Առավելագույնը երկու վարկանիշ ստացած (կշիռ չունեցող GPA 3.9 և ավելի) աշակերտները պարգևատրվում են խրախուսական պատվոգրով և տեղ են գտնում ճեմարանի ԴԾ պատվոգրեր ստացողների ցանկում:

7.5.3. Վարկանիշը՝ որպես պաշտոնական արձանագրության մի մաս, ուղարկվում է բուհի՝ ընդունելության հարցերով զբաղվող գրասենյակ:

7.6. Պարգևատրում

Այն սովորողները, որոնք ունեն՝

7.6.1. տվյալ կիսամյակում կամ ուսումնական տարում **95%** և բարձր բացարձակ ռեյտինգ և ոչ ավելի քան 2 հատ **8** (**ՀՀ** գնահատման համակարգով, **ՄԲ** գնահատման համակարգով՝ **6**) տարեկան կամ կիսամյակային վերջնական թվանշաններ, համարվում են ճեմարանի «Ոսկեփայլ» սաներ:

7.6.2. տվյալ կիսամյակում կամ ուսումնական տարում **90%** և բարձր բացարձակ ռեյտինգ և ոչ ավելի քան 5 հատ **8** (**ՀՀ** գնահատման համակարգով, **ՄԲ** գնահատման համակարգով՝ **6**) տարեկան կամ կիսամյակային վերջնական թվանշաններ, համարվում են ճեմարանի «Արծաթափայլ» սաներ:

7.6.3. տվյալ կիսամյակում կամ ուսումնական տարում **85%** և բարձր բացարձակ ռեյտինգ և բոլոր առարկաներում ՄԲ համակարգով՝ **5-**ից բարձր թվանշաններ, համարվում են ճեմարանի «Փայլուն» սաներ:

7.7. Արդյունքների ամփոփում

7.7.1. Այն սովորողները, որոնց վերջնական գնահատականը՝ հաշվարկված առաջին տարվա վերջում ընտրված վեց առարկաների վերջնական գնահատականներից, ցածր է 24 միավորից և/կամ չեն կատարել ԴԾ հիմնական բաղադրիչների պահանջները, ինչպես նշված է ճեմարանի ակադեմիական օրացույցում, ՄԲ դիպլոմ ստանալու երաշխավորություն չեն ստանում: Այդպիսի աշակերտները գրանցվում են ՄԲ ԴԾ վերջնական քննություններին մասնակցելու՝ ՄԲ հավաստագիր և ոչ թե ամբողջական դիպլոմ ստանալու համար:

7.7.2. Եթե սովորողը ունի չորս (4) բացասական գնահատական կիսամյակային գնահատականների արդյունքներով, սանի հետագա ուսումնառության հարցը քննարկվում է ԴԾ մանկավարժական առաջնորդության նիստի ընթացքում և վերջնական որոշումը կայացվում է տնօրենության խորհրդի կողմից:

7.7.3. Եթե աշակերտը ունենում է չորս (4) բացասական գնահատական տարեվերջյան քննությունների արդյունքում, ծնողի հետ լուծվում է կրթական ծրագրի իրականացման պայմանագիրը:

**8.** ՄԲ և պետական դիպլոմի գնահատման համակարգը

8.1. Դիպլոմային ծրագրին (ԴԾ) և ճեմարանի պետական ծրագրին միաժամանակ մասնակցող սովորողները գնահատվում են յուրաքանչյուր ծրագրի համար առանձին՝ համապատասխան գնահատման սահմանաչափերի (տե՛ս հավելված 5):

8.2. Այն առարկաների ուսումնառությունը, որոնք ներառված են երկու ծրագրերում, գնահատվում է համաձայն ընթացիկ փաստաթղթի պայմանների և գնահատման սանդղակի (հավելված 2 և 4):

8.3. Այն առարկաների ուսումնառությունը, որոնք ներառված են ճեմարանի միայն պետական ծրագրով, գնահատվում են՝ համաձայն ճեմարանի ավագ դպրոցի պետական ծրագրի գնահատման քաղաքականության:

8.4. Աշակերտները պետք է հանձնեն պետական քննություններ հայերեն, մաթեմատիկա, հայոց պատմություն առարկաներից առաջին կիսամյակի վերջում կամ 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի վերջում:

**9.** Արդյունքների արձանագրում և հաշվետվություն

9.1. Արձանագրում

9.1.1. Հետազոտական միավորի արդյունքները գրանցվում են «ManageBac»–ի մատյանում:

9.2. Հաշվետվություն

9.2.1. Բոլոր ուսանողներն ու ծնողները «ManageBac» առցանց պլատֆորմի միջոցով կիսամյակի ընթացքում երկու անգամ ստանում են սովորողների առաջընթացի մասին հաշվետվության քարտեր:

9.2.2. Ուսուցիչները (ներառյալ TOK-ը) ներկայացնում են սովորողի ձեռքբերումները, մարտահրավերները, դասի մասնակցությունը, հաճախելիությունը, գնահատականները և բարելավումների վերաբերյալ նրանց առաջարկությունները:

9.2.2.1. Ծավալուն էսսեի (EE) և Հանրային ծառայության (CAS) համակարգողները ներկայացնում են ուսանողների առաջընթացը հիմնական/CORE բաղադրիչների վերաբերյալ:

9.2.2.2. ԴԾ ուսանողական առաջնորդը տեղեկություն է ներկայացնում՝ հիմնվելով սովորողի որակների հատկանիշների վրա:

9.2.2.3. UGC- ն տեղեկություն է տրամադրում ուսանողի համալսարանական առաջընթացի մասին:

9.2.3. 12-րդ դասարանի աշակերտները, որոնք մայիսին հանձնելու են ավարտական քննություններ, վաղ ավարտում են իրենց ուսումնաժամկետը, և ավարտական կիսամյակի նրանց հաշվետվությունը տրվում է նախքան ավարտելը:

9.2.4. Ամենամյա տարեկան գնահատականների փաստաթուղթը, որը ցույց է տալիս ուսանողների ակադեմիական առաջադիմությունը, ներառում է յուրաքանչյուր կիսամյակի համար ստացված գնահատականները և միջին որակական գնահատականը (GPA), վերջինն էլ հաշվարկվում է ինչպես կշիռ ունեցող, այնպես էլ կշիռ չունեցող սանդղակի հիման վրա (տե՛ս GPA հաշվարկման քաղաքականություն): Խորացված դասընթացների սովորողների առաջադիմությունը 3 միավորից բարձր լինելու դեպքում տվյալ առարկայի համար տրվում է հավելյալ միավոր: (Տես GPA-ի հաշվարկման քաղաքականությունը)

9.3. Ծնողական հանդիպումներ

Ծնողական հանդիպումները ուսումնական տարվա ընթացքում գումարվում են երեք անգամ, որոնց ընթացքում ներկայացվում են հետևյալ պահանջները՝

9.3.1. առարկայի պահանջները, բովանդակությունը, գնահատման նպատակները,

9.3.2. ուսուցման ռազմավարությունը, ուսման արդյունքները և սովորողների պարտականությունները,

9.3.3. սովորողի առաջընթացը (ձեռքբերումներ, մարտահրավերներ և հնարավոր լուծումներ):

9.4. Ուսանողական հանդիպումներ

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում են աշակերտական հանդիպումներ (եռակողմ հանդիպումներ՝ ծնող-ուսուցիչ-սովորող), որի ընթացքում սովորողները անդրադառնում են իրենց նվաճումներին, թերացումներին, ինչպես նաև մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ ձեռնարկվելիք գործողություններին:

**10.** Վերջնաժամկետների պահպանում

10.1. Եթե սովորողները չեն պահպանում ներքին գնահատման առաջադրանքների, ինչպես նաև դասընթացների, դպրոցական ակադեմիական օրացույցով սահմանված այլ առաջադրանքներ ներկայացնելու ժամկետները, հնարավոր է՝ չկարողանան աշխատանքը IBO ներկայացնել, որի արդյունքում կստանան մերժում:

**11.** Առնչություններ կրթական քաղաքականությունների միջև

11.1. Լեզվի քաղաքականություն

11.1.1. Եթե սովորողի մայրենի լեզուն հայերենը չէ, նա կարող է ներառվել հայագիտության դասընթացում, որտեղ կիրառելի է միայն կշիռ չունեցող ձևավորող գնահատումը:

11.2. Ներառականության քաղաքականություն

11.2.1. Եթե սովորողը բնութագրվում է Ճեմարանի Ներառական կրթության քաղաքականությամբ սահմանված որևէ կարգով, ապա ուսուցիչները Ներառական կրթության համակարգողի և հոգեբանական ծառայությունների հետ համագործակցությամբ կազմում են տվյալ իրավիճակին համապատասխան փաստաթուղթ:

11.2.2. ՄԲ-ի կողմից սահմանված գնահատման ընթացակարգերը ներառական կրթության սովորողների համար կիրառվում են Դիպլոմային ծրագրի (ԴԾ) արտաքին քննությունների ժամանակ:

11.2.3. Անհատական ուսուցում. Եթե սովորողը ընդունվել է Ճեմարան և որևէ առարկայում չի ցուցաբերում բավարար գիտելիքներ և հմտություններ, ապա նա գնահատվում է հատուկ մշակված անհատական գնահատման պլանի հիման վրա, որը հաստատվում է ԴԾ համակարգողի և տվյալ առարկայի ամբիոնի ղեկավարի կողմից:

11.2.4. Գնահատման հարմարեցումներ. (օր.՝ լրացուցիչ ժամանակ, փոփոխված ձևաչափեր, օժանդակ տեխնոլոգիաներ) իրականացվում են ՄԲ կանոնակարգերին համապատասխան՝ հիմնվելով Ճեմարանի Ներառական կրթության համակարգողի և հոգեբանական ծառայությունների փաստաթղթերի վրա: Այս միջոցառումները ապահովում են, որ բոլոր սովորողները կարողանան արդյունավետ և արդարացի կերպով ցուցադրել իրենց ուսումնառությունը:

11.2.5. Ուսուցիչները վերապատրաստվում են՝ հարմարեցումները հավասարաչափ և անկողմնակալ իրականացնելու համար:

11.3. Ակադեմիական ազնվության քաղաքականություն

11.3.1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին սովորողները ծանոթանում են դպրոցի ակադեմիական ազնվության քաղաքականությանը, ապա ստորագրում կանոնակարգը պահպանելու խոստումը:

11.3.2. Ակադեմիական ազնվության սկզբունքները պետք է խստորեն պահպանվեն բոլոր տեսակի առաջադրանքները կատարելիս:

11.3.3. Արտաքին քննությունների ընթացքում ակադեմիական անազնվության հետ կապված բոլոր հարցերը կարգավորվում են Միջազգային բակալավրիատի պահանջների համաձայն (տե՛ս Academic Integrity IBO 2019, Հավելված 2).

11.4. Ընդունելության քաղաքականություն

11.4.1. ԴԾ ընդունելությունն անցկացվում է մրցութային հիմունքներով՝ հաշվի առնելով ՄԲԴԾ (IBDP) դիմորդների ընդունելության քննությունները (անգլերեն, մաթեմատիկա) և հարցազրույցի արդյունքները:

11.4.2. Հաջողության հասած դիմորդները պետք է բավարարեն քննական նվազագույն շեմը, որը հիմնված է համեմատական վերլուծության վրա, և բարձր արդյունավետություն դրսևորեն հարցազրույցի ընթացքում: Հատուկ դեպքերում, այն դիմորդների համար, որոնք չեն բավարարում պահանջներից որևէ մեկը, ընդունող հանձնաժողովը կարող է որոշում կայացնել դիմորդին ընդունել պայմանական հիմունքներով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Կիսամյակն ավարտելուց հետո դպրոցի տնօրենների խորհուրդը որոշում է կայացնում՝ դիտարկելով սովորողի՝ ՄԲԴԾ (IBDP)-ում ուսումը շարունակելու հնարավորությունը. այս դեպքում ելակետային են սովորողի առաջադիմությունը և սովորողի նկարագրին համապատասխան որակների առկայությունը (տե՛ս IBDP ընդունելության քաղաքականություն):

## 12. Դերեր և պարտականություններ

Դպրոցական ողջ համայնքը պատասխանատու է գնահատման քաղաքականության իրականացման համար:

- ԴԾ գնահատման քաղաքականությունը տարեկան վերանայվում է հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկված են ուսուցիչներ, ԴԾ համակարգողը, սովորողների ներկայացուցիչներ և ծնողներ:
- Վերանայումները հիմնվում են ՄԲ-ի թարմացումների, գնահատման արդյունքների և շահառուների արձագանքների վրա:
- Փոփոխությունները գրանցվում են տարբերակների վերահսկման հավելվածում՝ նշելով տարին, կատարված փոփոխությունները և պատասխանատու կողմերին:
- Թարմացումների ամփոփագիրը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին հաղորդվում է համայնքին:

12.1. Դպրոցի տնօրենություն

12.1.1. Դպրոցի ղեկավարությունը պատասխանատու է գնահատման քաղաքականության ձևավորման, դրա վերահսկողության և տարեկան վերանայման համար:

12.1.2. Դպրոցի ղեկավարությունը պատասխանատու է ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման սեմինարների կազմակերպման համար:

12.1.3. Բոլոր սկսնակ ուսուցիչները ծանոթանում են ճեմարանի գնահատման քաղաքականությանը, և անցնում են ՄԲ-ին հատուկ գործելակերպերի վերաբերյալ վերապատրաստում. չափանիշներով գնահատում, ներքին գնահատումների ստանդարտացում և չափորոշիչների կիրառություն:

12.1.4. Իրականացվում են շարունակական մասնագիտական զարգացման ծրագրեր՝ ֆակուլտետի շրջանակում գնահատման գործելակերպերը կատարելագործելու նպատակով:

12.1.5. Ստեղծվում և պարբերաբար վերանայվում են ներքին գնահատումների օրացույցը և գնահատման ստանդարտացման ընթացակարգերը

12.2. Ուսուցիչ

Ուսուցիչները պարտավոր են՝

12.2.1. գնահատումը համարել ուսուցման և ուսումնառության պլանավորման ամենաէական բաղադրիչը.

12.2.2. շարունակաբար ուսումնասիրել գնահատման քաղաքականությունը և դասընթացները ձևավորել՝ համապատասխան վերջինիս բովանդակությանը և պահանջներին.

12.2.3. իրականացնել առարկայի չափանիշներին վերաբերող գնահատումներ, որոնք համապատասխանում են գնահատման քաղաքականությանը և ՄԲ (IB) գնահատման ուղեցույցին.

12.2.4. ստեղծել գնահատման խորագրեր և այլ փաստաթղթեր,

12.2.5. ներգրավել ուսանողներին գնահատման պլանավորման գործընթացում,

12.2.6. մասնակցել գնահատման քաղաքականության վերանայման գործընթացին,

12.2.7. սովորողներին տեղեկացնել գնահատման չափանիշների առանձնահատկությունների մասին,

12.2.8. աջակցել սովորողների ինքնագնահատմանը, ինքնավերլուծությանը, ինքնակազմակերպման հմտությունների զարգացմանն ու արտահայտմանը,

12.2.9. սովորողներին տրամադրել բավարար ժամանակ՝ գնահատվող առաջադրանքի վրա աշխատելու և կատարելու համար,

12.2.10. հստակեցնել յուրաքանչյուր առաջադրանքի կամ վերջինիս համար պահանջվող քայլերը՝ սովորողներին տեղեկացնելով գնահատման համապատասխան չափանիշների մասին,

12.2.11. գնահատել սովորողների ներկայացրած բոլոր աշխատանքները և դրանք առանց հապաղելու վերադարձնել նրանց,

12.2.12. մասնակցել գնահատման գրագիտությանը (assessment literacy) վերաբերվող շարունակական վերապատրաստումներին:

12.2.13. վերանայել սովորողների առաջադիմության տվյալները՝ ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով:

12.2.14. Համագործակցելով ստեղծել ձևավորող առաջադրանքներ և կիսվել լավագույն փորձառություններով:

12.3. Սովորող

Սովորողները պարտավոր են՝

12.3.1. կարևորել գնահատումը ՝ որպես ուսումնառության անբաժանելի մաս,

12.3.2. մասնակցել ինքնագնահատման և դասընկերների գնահատման գործընթացին,

12.3.3. հանձնել ցանկացած պահանջվող աշխատանք՝ յուրացման առաջադրանքներ, դասարանական աշխատանքներ, նախագծեր և այլն՝ պահպանելով նշված ժամկետները,

12.3.4. ապահովել ներկայացված ցանկացած աշխատանքի կոնկրետությունն ու նպատակահարմարությունը,

12.3.5. մասնակցել գնահատման պլանավորման գործընթացին,

12.3.6. մասնակցել գնահատման քաղաքականության վերանայման գործընթացին,

12.3.7. պահպանել գնահատման պորտֆոլիոն/թղթապանակը՝ ներառյալ ինքնավերլուծությունները,

12.3.8. ակտիվորեն մասնակցել եռակողմ հանդիպումներին,

12.3.9. հարգել ներքին գնահատման (IA) և գնահատման վերջնաժամկետները: Վերջնաժամկետների կրկնվող խախտումների դեպքում տեղեկացվում է ծնողին, և հնարավոր է կիրառել ակադեմիական պատժամիջոցներ:

12.4. Ծնող

Ծնողները պարտավոր են՝

12.4.1. ծանոթանալ գնահատման նպատակներին, սկզբունքներին, ձևերին և տեսակներին,

12.4.2. ընդունել գնահատման քաղաքականության փաստաթղթի պայմանները,

12.4.3. աջակցել սովորողներին գնահատման հմտությունները զարգացնելու հարցում՝ տանը բարենպաստ միջավայր ապահովելով,

12.4.4. մասնակցել գնահատման քաղաքականության վերանայման գործընթացին,

12.4.5. մասնակցել ուսանողների կողմից ղեկավարվող հանդիպումներին և տեղեկացված լինել գնահատման ակնկալիքների վերաբերյալ,

12.4.6. աջակցել սովորողներին՝ պահպանելու վերջնաժամկետները և անդրադառնալու տրամադրված անդրադարձին:

Սույն քաղաքականությունը կազմված է հայերեն և անգլերեն օրինակներից, որոնց միջև հակասության դեպքում գերակայությունը տրվում է անգլերենին:

## 13. Հղումներ

Academic Integrity, IBO, 2019 (updated February 2025)

Assessment Procedures, IBO, 2025

Diploma Programme Assessment: Principles and Practice, IBO, 2019 (Updated May 2025)

Diploma Programme: From Principles into Practice, IBO, 2015

General Regulations: Diploma Programme, IBO, 2025

Guidelines for Developing a School Assessment Policy in the Diploma Programme, IBO, 2010

Programme Standards and Practices, IBO, 2020

IB Learner Profile, IBO, 2013

Learning, Teaching and Assessment in the DP, IBO, 2023

Աջակցության աղբյուրների վերաբերյալ նշում

Վերանայման հանձնաժողովը հաստատում է, որ վերանայման գործընթացում կիրառվել են արհեստական բանականությամբ աջակցվող գործիքներ (օրինակ՝ ChatGPT՝ OpenAI-ի կողմից)՝ հատկապես լեզվական ձևակերպումների հստակեցման և ճշգրտման նպատակով։ Բոլոր բովանդակային որոշումները և հիմնական հստակեցումները կատարվել են բացառապես դպրոցի քաղաքականությամբ զբաղվող թիմի կողմից։

## 14. Հավելվածներ

## Հավելված 1. ՄԲ ԴՊ առարկայական նպատակներ, արտաքին և ներքին գնահատման առաջադրանքներ

Խումբ 1. Լեզու A. Գրականություն (հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն)

- Նպատակներ. Գիտելիք և ըմբռնում, վերլուծություն, սինթեզ, գնահատում, լեզվի պատշաճ օգտագործում:
- Արտաքին գնահատում.
  - SL. Թղթապանակ 1 (Ղեկավարող գրական վերլուծություն), Թղթապանակ 2 (Համեմատական էսսե):
  - HL. Թղթապանակ 1 (Ղեկավարող գրական վերլուծություն), Թղթապանակ 2 (Համեմատական էսսե), HL էսսե (1,200–1,500 բառ):
- Ներքին գնահատում (SL/HL). Անհատական բանավոր (գլոբալ խնդրի վերլուծություն երկու ստեղծագործության մեջ):

Խումբ 2. Լեզու B (անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն)

- Նպատակներ. Արդյունավետ հաղորդակցություն, լեզվի ըմբռնում և կիրառում միջմշակութային համատեքստում, անդրադարձ տեքստերին:
- Արտաքին գնահատում (SL/HL). Թղթապանակ 1 (Գրավոր), Թղթապանակ 2 (Լսողական և ընթերցողական ըմբռնում):
- Ներքին գնահատում. Անհատական բանավոր:

Լեզու ab initio (ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն)

- Նպատակներ. Հիմնական հաղորդակցական հմտություններ, պարզ գրավոր/խոսքային տեքստերի ըմբռնում, մշակութային անդրադարձ:
- Արտաքին գնահատում (SL). Թղթապանակ 1 (Գրավոր), Թղթապանակ 2 (Լսողական և ընթերցողական ըմբռնում):
- Ներքին գնահատում. Անհատական բանավոր:

Խումբ 3. Անհատներ և հասարակություններ

- Աշխարհագրություն (SL/HL)
  - Նպատակներ. Գիտելիք, վերլուծություն, գնահատում, աշխարհագրական հմտությունների կիրառում:
  - Արտաքին գնահատում. Թղթապանակ 1, Թղթապանակ 2 (SL). Թղթապանակ 1–3 (HL):
  - Ներքին գնահատում. Դաշտային հետազոտության գրավոր զեկույց (մինչև 2,500 բառ):
- Պատմություն (SL/HL)
  - Նպատակներ. Գիտելիք, կիրառություն, մեկնաբանություն, գնահատում, պատմական հմտություններ:
  - Արտաքին գնահատում. Թղթապանակ 1 և 2 (SL). Թղթապանակ 1–3 (HL):
  - Ներքին գնահատում. Պատմական հետազոտություն (1,500–2,000 բառ):
- Տնտեսագիտություն (SL/HL)
  - Նպատակներ. Գիտելիք, կիրառություն, գնահատում, տնտեսական հմտություններ:
  - Արտաքին գնահատում. Թղթապանակ 1–2 (SL). Թղթապանակ 1–3 (HL):
  - Ներքին գնահատում. Երեք մեկնաբանություններից բաղկացած պորտֆոլիո (յուրաքանչյուր մեկնաբանություն առավելագույնը 750 բառ):
- Բիզնեսի կառավարում (SL/HL)

- ○ Նպատակներ. Գիտելիք, վերլուծություն, սինթեզ, գնահատում, կառավարման գործիքների կիրառում:
  - ○ Արտաքին գնահատում. Քննաթերթիկ 1–2 (SL). Քննաթերթիկ 1–2 (HL):
  - ○ Ներքին գնահատում. Հետազոտական նախագիծ (SL՝ մոտ 1,500 բառ, HL՝ մոտ 2,000 բառ):

Խումբ 4. Բնագիտություններ

- Կենսաբանություն, Քիմիա, Ֆիզիկա (SL/HL)
  - Նպատակներ. Գիտելիք, կիրառություն, վերլուծություն, փորձարարական և հետազոտական հմտություններ:
  - Արտաքին գնահատում. Քննաթերթիկ 1–2 (SL). Քննաթերթիկ 1–3 (HL):
  - Ներքին գնահատում. Գիտական հետազոտություն (6–12 էջ):
  - Լրացուցիչ բաղադրիչ. Համագործակցային գիտական նախագիծ:
- Համակարգչային գիտություն (SL/HL)
  - Նպատակներ. Գիտելիք, կիրառություն, գնահատում, խնդիրների լուծման հմտություններ:
  - Արտաքին գնահատում. Քննաթերթիկ 1–2 (SL). Քննաթերթիկ 1–3 (HL):
  - Ներքին գնահատում. Գործնական լուծման մշակում:
  - Լրացուցիչ բաղադրիչ. Համագործակցային գիտական նախագիծ:
- Դիզայն տեխնոլոգիա (SL/HL)
  - Նպատակներ. Հարցումներ և խնդիրների լուծում, դիզայնի սկզբունքների կիրառում, քննադատական անդրադարձ, դիզայնի լուծումների գնահատում:
  - Արտաքին գնահատում. Քննաթերթիկ 1–2 (SL). Քննաթերթիկ 1–3 (HL):
  - Ներքին գնահատում. Դիզայնի նախագիծ (հետազոտություն, դիզայն, նախատիպ, գնահատում):
  - Լրացուցիչ բաղադրիչ. Համագործակցային գիտական նախագիծ:

Խումբ 5. Մաթեմատիկա

- Մաթեմատիկա. Վերլուծություն և մոտեցումներ (SL/HL)
  - Նպատակներ. Գիտելիք, դատողություն, խնդիրների լուծում, մաթեմատիկական հաղորդակցություն:
  - Արտաքին գնահատում. Քննաթերթիկ 1–2 (SL). Քննաթերթիկ 1–3 (HL):
  - Ներքին գնահատում. Մաթեմատիկական ուսումնասիրություն (6–12 էջ):

Հիմնական բաղադրիչներ

- Ընդլայնված էսսե (EE). Անկախ հետազոտական նախագիծ (մինչև 4,000 բառ): Արտաքին գնահատում՝ հինգ չափանիշներով (Կենտրոնացում, Գիտելիք, Քննադատական մտածողություն, Ներկայացում, Ներգրավվածություն):
- Իմացության տեսություն (TOK).
  - Արտաքին գնահատում. Էսսե (1,600 բառ, սահմանված վերնագրերով):
  - Ներքին գնահատում. Ցուցահանդես (IA առաջադրանքի վերլուծություն օբյեկտներով):
- Ստեղծագործություն, Գործունեություն, Ծառայություն (CAS).
  - Ներդրում իմաստալից փորձառությունների բոլոր երեք ուղղություններով:

- Ապացուցված ձեռքբերում 7 ուսումնառական արդյունքներում (տես թարմացված սանդղակ):
- Տարունակական անդրադարձեր և վերջնական CAS հարցազրույց:

## Հավելված 2. ՄԲ ԴԾ գնահատման սահմանաչափեր ամփոփիչ և տարեվերջյան քննությունների համար

ՄԲ պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ամփոփիչ/ձևավորիչ (կշիռ ունեցող) գնահատականները և տարեվերջյան քննությունները որոշվում են տոկոսային սահմանաչափերով (ինչպես ներկայում կիրառվում է Շիրակացու Ճեմարանում), տառային մակարդակներով և որակական բնութագրիչներով, որոնք արտացոլում են սովորողի ձեռքբերումների բնույթը:

| Գնահատական | Տառային | Տոկոսային միջակայք (Ճեմարանի քաղաքականություն) | Բնութագրիչ |
|---|---|---|---|
| | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | A | 88–100% | Գերազանց արդյունք. ցույց է տալիս գիտելիքների և հմտությունների հետևողական տիրապետում: Աշխատանքը վկայում է խորքային իմացության, ընկալունակ վերլուծության և ինքնատիպության մասին: Բարձր մակարդակի քննադատական մտածողություն և գնահատում: Կապակցման հմտությունները ճշգրիտ են, արդյունավետ և ակադեմիական միջավայրին համապատասխան: |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | B | 75–87% | Շատ լավ արդյունք. ցույց է տալիս էական գիտելիքներ և ըմբռնում: Աշխատանքը վերլուծական է և լավ կառուցվածք ունի՝ ինքնատիպության որոշ ապացույցներով: Հմտությունները կիրառվում են արդյունավետորեն՝ թե՛ ծանոթ, թե՛ որոշ չափով անծանոթ համատեքստերում: Կապակցումն ընդհանուր առմամբ հստակ է՝ փոքր թերություններով: |
| 5 | C | 62–74% | Լավ արդյունք. ցույց է տալիս ամուր գիտելիքներ և ըմբռնում: Վերլուծությունը բավարար է, թեև կարող է պակասել խորություն: Հմտությունների կիրառումը հիմնականում արդյունավետ է ծանոթ համատեքստերում: Կապակցումը հիմնականում հստակ է՝ երբեմն թույլ կողմերով: |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | C | 50–61% | Գոհացուցիչ արդյունք. ցույց է տալիս բավարար գիտելիքներ և ըմբռնում՝ նկատելի բացերով։ Վերլուծությունը սահմանափակ է. աշխատանքն ավելի նկարագրական է, քան քննադատական։ Հմտությունների կիրառումը անհամապատասխան է։ Կապակցումն ընդհանուր առմամբ հասկանալի է, բայց երբեմն անորոշ։ |
| 3 | D | 33–49% | Անբավարար արդյունք. ցույց է տալիս հիմնական գիտելիքներ՝ զգալի թյուրըմբռնումներով։ Վերլուծությունը շատ սահմանափակ է, հիմնականում նկարագրական՝ քիչ գնահատմամբ։ Հմտությունների կիրառումը թույլ է։ Կապակցումը հաճախ անորոշ է։ |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | E | 20–32% | Թույլ արդյունք. ցույց է տալիս սահմանափակ գիտելիքներ՝ լուրջ թյուրըմբռնումներով: Աշխատանքը գրեթե չի պարունակում վերլուծություն: Հմտությունների կիրառումը հազվադեպ է արդյունավետ: Կապակցումը թույլ է և հաճախ անկատար: |
| 1 | F | 1–19% | Անբավարար արդյունք. ցույց է տալիս շատ քիչ գիտելիք առարկայից: Աշխատանքը մասնատված է, անհամապատասխան կամ անիմաստ: Վերլուծության կամ հմտությունների կիրառման ապացույց չկա: Կապակցումը չափազանց թույլ է: |

| | | | |
|---|---|---|---|
| 0 | — | — | Աշխատանք չի ներկայացվել, ներկայացված աշխատանքը չի վերաբերում առաջադրանքին, կամ առկա են ակադեմիական անազնվության դեպքեր (պլագիատ, համագործակցային խաբեություն, կեղծիք): |

Նշում. Այս բնութագրիչները պետք է կարդացվեն համատեղ ՄԲ Դիպլոմային ծրագրի առարկայական գնահատման բնութագրիչների հետ՝ ապահովելու Ճեմարանի ներքին գնահատման և ՄԲ ամփոփիչ ակնկալիքների համահունչ լինելը:

Հավելված 3: ՄԲԴԾ կիսամյակի/տարվա գնահատականների հաշվարկման բաղադրիչները

| Բաղադրիչներ | Գնահատականի կշիռը կիսամյակում | Գնահատականի կշիռը ուստարում: |
|---|---|---|
| Ամփոփիչ գնահատում | 75 % | |
| Կշիռ ունեցող ձևավորող գնահատում | 10 % | |
| Ցուրացման կամ գործնական առաջադրանքներ | 5 % | |
| Վարք և մասնակցություն | 5 % | |
| Թղթապանակ | 5 % | |
| Term I grade | | 33.3 % |
| Term II grade | | 33.3% |
| Տարեվերջյան քննություն | | 33.(3) % |

Հավելված 4: ՄԲԴԾ-ի Գնահատման հավելյալ բաղադրիչներ

4.1: Ձևավորող գնահատման հավելյալ բաղադրիչները (25%)

| Մասնակցություն և վարք (5%) | | Նկարագիր |
|---|---|---|
| Գերազանց | Ա | ● Դրսևորում է գերազանց և հետևողական նախապատրաստություն՝ կատարելով յուրացման առաջադրանքները և ներկայացնելով անհրաժեշտ նյութերը:<br>● Շարունակաբար պահպանում է դասին մասնակցության բարձր մակարդակ՝ գրառումներ կատարելով, թեմային վերաբերող հարցեր տալով, դասի քննարկումներին նպաստելով և հասակակիցների հետ համագործակցելով:<br>● Միշտ ցույց է տալիս գերազանց վարք և հարգանք ուսուցչի և հասակակիցների նկատմամբ:<br>● Մեծապես նպաստում է դասավանդման և ուսուցանման համար նպաստատավոր միջավայր ստեղծելուն: |
| Լավ | Բ | ● Մեծ մասամբ դրսևորում է դասին պատրաստվելու լավ մակարդակ՝ կատարելով յուրացման առաջադրանքները և ներկայացնելով անհրաժեշտ նյութերը:<br>● Մեծ մասամբ պահպանում է դասին մասնակցելու պատշաճ մակարդակը՝ նշումներ կատարելով, թեմային վերաբերող հարցեր տալով, դասի քննարկումներին մասնակցելով և հասակակիցների հետ համագործակցելով:<br>● Մեծ մասամբ դրսևորում է լավ վարք և հարգանք ուսուցչի և հասակակիցների հանդեպ:<br>● Հիմնականում նպաստում է ուսուցման և դասավանդման համար նպաստավոր միջավայր ստեղծլուն: |
| Բարելավման կարիք կա | Գ | ● Հազվադեպ է դրսևորում դասին պատրաստված լինելու ընդունելի մակարդակ՝ յուրացման առաջադրանքները կատարելով և անհրաժեշտ նյութերը ներկայացնելով:<br>● Հազվադեպ է պահպանում դասի մասնակցության պատշաճ մակարդակը ՝ գրառումներ կատարելով, թեմային վերաբերող հարցեր տալով, մասնակցելով դասի քննարկումներին և համագործակցելով հասակակիցների հետ:<br>● Հազվադեպ է դրսևորում լավ վարվելակերպ և հարգանք ուսուցչի և հասակակիցների նկատմամբ: |

| | | |
|---|---|---|
| | | • Հազվադեպ է նպաստում ուսուցման և դասավանդման համար նպաստավոր միջավայր ստեղծելուն: |
| Անընդունելի | Դ | • Գրեթե երբեք չի դրսևորում դասին նախապատրաստվելու ընդունելի մակարդակ՝ յուրացման առաջադրանքներ կատարելով և ներկայացնելով անհրաժեշտ նյութերը:<br>• Գրեթե երբեք չի պահպանում դասին մասնակցելու պատշաճ մակարդակ՝ գրառումներ կատարելու, թեմային վերաբերող հարցեր տալու, դասի քննարկումներին մասնակցելու և հասակակիցների հետ համագործակցելու առումներով:<br>• Գրեթե երբեք չի դրսևորում լավ վարք և հարգանք ուսուցչի և հասակակիցների հանդեպ:<br>• Գրեթե երբեք չի նպաստում ուսուցման և դասավանդման համար նպաստավոր միջավայր ստեղծելուն: |
| Յուրացման առաջադրանքներ (5%) | | Նկարագիր |
| Անընդունելի | Դ | • Յուրացման առաջադրանքները չեն կատարվել ժամանակին և (կամ) ողջ պահանջներին համապատասխան: |
| Բարելավման կարիք կա | Գ | • Յուրացման առաջադրանքները կատարվել են մակերեսային մակարդակով. զուրկ են խոր վերլուծությունից: |
| Լավ | Բ | • Յուրացման առաջադրանքները կատարվել են ժամանակին՝ համապատասխան խորության և վերլուծության մակարդակով: |
| Գերազանց | Ա | • Յուրացման առաջադրանքները կատարվել են ժամանակին՝ վերլուծության բարձր մակարդակով և ուսուցչի կողմից առաջադրված բոլոր պահանջներին համապատասխան: |
| Թղթապանակ (5%) | | Նկարագիր |
| Գերազանց | Ա | • Նշանակված, դասընթացի վերաբերող բոլոր նյութերը ներառված են թղթապանակում (պորտֆոլիո): Նյութերը ցույց են տալիս կիսամյակում անհրաժեշտ հմտությունների գերազանց, շարունակական առաջընթաց և զարգացում:<br>• Լրացված անդրադարձի / գնահատման ձևը հստակ ցույց է տալիս, թե ինչպես է դասընթացը նպաստել ուսանողի ՈՒՄ (ATL) հմտությունների և ՄԲ (IB) սովորողի որակների զարգացմանը:<br>• Լրացված անդրադարձի / գնահատման ձևը պարունակում է առաջընթացի արտացոլման շարադրում, որը հստակ ցույց է տալիս սովորողի՝ իր իսկ աշխատանքը քննադատելու կարողությունը, բացահայտելու թույլ և ուժեղ կողմերը և առաջարկելու պահանջվող հմտությունները կատարելագործելու ուղիներ: |

| | | |
|---|---|---|
| Լավ | Բ | • Դասընթացին վերաբերող նյութերի մեծ մասը ներառված է թղթապանակում: Դրանք ցույց են տալիս տվյալ կիսամյակում անհրաժեշտ հմտությունների, դրանց զարգացման լավ, փոքր-ինչ կայուն մակարդակ:<br>• Լրացված անդրադարձի / գնահատման ձևը բավական լավ ցույց է տալիս, թե ինչպես է դասընթացը նպաստել ուսանողի ՈՒՄ (ATL) հմտությունների և ՄԲ (IB) սովորողի որակների զարգացմանը:<br>• Լրացված անդրադարձի / գնահատման ձևը պարունակում է առաջընթացի արտացոլման շարադրում, որը բավական լավ ցույց է տալիս սովորողի կարողությունը քննադատելու իր աշխատանքը, բացահայտելու թույլ և ուժեղ կողմերը և առաջարկելու պահանջվող հմտությունների հետագա կատարելագործման ուղիներ: |
| Բարելավման կարիք ունեցող | Գ | • Դասընթացին վերաբերող նյութերի մեծ մասը ներառված է թղթապանակում: Նյութերը ցույց են տալիս առաջընթացի որոշակի աստիճան և կիսամյակի համար անհրաժեշտ հմտությունների զարգացում:<br>• Անդրադարձի / գնահատման լրացված ձևը որոշ չափով ցույց է տալիս, թե ինչպես է դասընթացը նպաստել ուսանողի ՈՒՄ (ATL) հմտությունների և ՄԲ (IB) սովորողի որակների զարգացմանը:<br>• Լրացված անդրադարձի / գնահատման ձևը պարունակում է առաջընթացի արտացոլման շարադրում, որը որոշ չափով ցույց է տալիս ուսանողի՝ իր աշխատանքը քննադատելու կարողությունը, բացահայտելու թույլ և ուժեղ կողմերը և առաջարկելու պահանջվող հմտությունների հետագա կատարելագործման ուղիներ: |
| Անընդունելի | Դ | • Թղթապանակում հազվադեպ են ներառված դասընթացների հետ կապված նյութեր: Նյութերը ցույց չեն տալիս առաջընթացի որևէ աստիճան և պահանջվող հմտությունների զարգացման ժամկետը:<br>• Լրացված անդրադարձի / գնահատման ձևը չի նշում, թե ինչպես է դասընթացը նպաստել ուսանողի ՈՒՄ (ATL) հմտությունների և ՄԲ (IB) սովորողի որակների զարգացմանը:<br>• Լրացված անդրադարձի / գնահատման ձևը պարունակում է առաջընթացի արտացոլման շարադրում, որը ցույց չի տալիս սովորողի կարողությունը քննադատելու իր աշխատանքը, բացահայտելու թույլ և ուժեղ կողմերը և առաջարկելու պահանջվող հմտությունների հետագա կատարելագործման ուղիներ: |
| Թղթապանակները ընդհանուր առմամբ ներառում են ՄԲ (IB) սովորողի որակները, ուղեցույց, նպատակներ, գնահատման չափանիշներ, գնահատականների սահմաններ, հասկացություններ, ուսումնական պլան, հոդվածների օրինակներ, Շիրակացու ճեմարանի գնահատականների սահմանները, ներքին գնահատման ուղեցույց, MLA հղումների կանոնները, անդրադարձի նմուշ-օրինակ և այլ անհրաժեշտ փաստաթղթերի օրինակներ: | | |
| Ձևավորող գնահատում (10%) | | Նկարագիր |
| Գերազանց | Ա | • Ձևավորող գնահատման բոլոր առաջադրանքները կատարվել են խորությամբ ՝ հետևելով դրանցից յուրաքանչյուրի համար սահմանված պահանջներին: Առաջադրանքները ցույց են տալիս անհրաժեշտ հմտությունների շարունակական առաջընթաց և զարգացում: |

| | | |
|---|---|---|
| Լավ | Բ | • Ձևավորող գնահատման առաջադրանքների մեծ մասի կատարումը ցույց է տալիս մանրամասների նկատմամբ դրսևորվող ուշադրությամբ և դրանցից յուրաքանչյուրի համար սահմանված պահանջների համապատասխանությամբ: Նյութերը ցույց են տալիս բավարար առաջընթաց և պահանջվող հմտությունների զարգացում: |
| Բարելավման կարիք ունեցող | Գ | • Ձևավորող գնահատումներից միայն մի քանիսն են կատարված մանրամասների նկատմամբ մեծ ուշադրությամբ և դրանցից յուրաքանչյուրի համար սահմանված պահանջներին համապատասխան: Գնահատումները ցույց են տալիս պահանջվող հմտությունների քիչ առաջընթաց և զարգացում: |
| Անընդունելի | Դ | • Անհաջող փորձ է կատարվել լրացնել ձևավորող գնահատումները՝ յուրաքանչյուրի համար սահմանված պահանջների համաձայն: Գնահատումները չեն կարող ցույց տալ առաջընթացի և պահանջվող հմտությունների զարգացումը: |

## 4.2. ՄԲ ԴՊ CAS ձևավորիչ գնահատման բնութագրիչներ

| Մակարդակ | Բնութագրիչ | Համապատասխանություն CAS ակնկալիքներին |
|---|---|---|
| Գերազանց | Սովորողը ցուցադրում է կայուն ձեռքբերում բոլոր 7 ուսումնառական արդյունքներում: Անդրադարձները խորիմաստ են, վերլուծական և արտացոլում են անձնական զարգացման բարձր մակարդակ: Սովորողը դրսևորում է նախաձեռնողականություն, առաջնորդական կարողություններ և հստակ կարողություն՝ CAS փորձառությունները կապելու գլոբալ հարցերի, էթիկայի և ՄԲ սովորողի որակների հետ: CAS պորտֆոլիոն ամբողջական է, մանրամասն փաստագրված և արտացոլում է բացառիկ հետևողականություն և հավասարակշռություն ստեղծագործության, գործունեության և ծառայության միջև: | Ամբողջությամբ համապատասխանում է և գերազանցում է CAS ակնկալիքները |

| | | |
|---|---|---|
| Շատ լավ | Սովորողը ցուցադրում է ձեռքբերում բոլոր 7 ուսումնառության արդյունքներում՝ հստակ ապացույցներով անդրադարձի և զարգացման: Պլանավորումն ու համագործակցությունը արդյունավետ են, սովորողը դրսևորում է նախաձեռնողականություն և էթիկական պատասխանատվություն: Անդրադարձները իմաստալից են և կապվում են Սովորողի որակներին: Պորտֆոլիոն լավ է կառավարված՝ ներկայացնելով փորձառությունների և անդրադարձերի նշանակալի ապացույցներ: | Լիովին համապատասխանում է CAS ակնկալիքներին |

| | | |
|---|---|---|
| Լավ | Սովորողը հասնում է ուսումնառության արդյունքների մեծ մասին՝ հստակ ապացույցներով աճի: Անդրադարձները ցույց են տալիս ինքնագիտակցություն, թեև երբեմն կարող են պակասել վերլուծական խորությամբ: Պլանավորումն ու համագործակցությունը առկա են, և սովորողը պատասխանատու կերպով ներգրավվում է CAS գործունեություններում: Պորտֆոլիոն ամբողջական է՝ բավարար ապացույցներով: | Հնազանդվում է նվազագույն պահանջներին |
| Գոհացուցիչ | Սովորողը մասնակիորեն է հասնում ուսումնառության արդյունքներին: Անդրադարձների ապացույց կա, սակայն երբեմն մակերեսային է: CAS փորձառությունները որոշակի հավասարակշռություն ունեն, բայց կարող են գերակշռել մեկ ուղղությամբ: Սովորողը երբեմն դժվարանում է հետևողականության կամ համագործակցության հարցում: Պորտֆոլիոն պարունակում է հիմնական փաստաթղթեր, սակայն խորության պակաս կա: | Մոտենում է ակնկալիքներին |

| | | |
|---|---|---|
| Բարելավման կարիք ունի | Սովորողը սահմանափակ արդյունքներ է ցուցադրում ուսումնառության արդյունքներում: Անդրադարձները նկարագրական են, ոչ թե վերլուծական, և հաճախ անկատար: CAS գործունեությունները չունեն հավասարակշռություն կամ երկարաժամկետ նվիրվածություն: Նախաձեռնողականության և զլոբալ ներգրավվածության ապացույցները թույլ են: Պորտֆոլիոն թերի է կամ անկայուն: | Ցածր է ակնկալիքներից |
| Թույլ | Սովորողը նվազագույն առաջընթաց է ցուցադրում ուսումնառության արդյունքների ուղղությամբ: CAS փորձառությունները անհավասարակշռված կամ անկանոն են՝ քիչ անդրադարձով և աճի ապացույցներով: Փաստագրման մակարդակը շատ սահմանափակ է: | Շատ ցածր է ակնկալիքներից |

| | | |
|---|---|---|
| Շատ թույլ | Սովորողը չի ցուցադրում CAS ուսումնառության արդյունքների ձեռքբերում: Կա քիչ կամ բացակայում է նվիրվածության, անդրադարձի կամ փաստագրման ապացույց: | Չի բավարարում պահանջներին |
| Անթույլատրելի | Սովորողը չի ներգրավվել CAS-ում իմաստալից կերպով և չի տրամադրել ուսումնառական արդյունքների ապացույց: | Ապացույցների բացակայություն |

4.2. ՄԲԴԾ Ձևավորող գնահատման հավելյալ բաղադրիչների միավորների սահմաները

| Մակարդակ | Գնահատական | Տոկոս (%) | Առաջընթացի բնութագիր |
|---|---|---|---|
| Ա | 7 | 88-100 | Գերազանց |
| Բ | 6 | 75-87 | Լավ |
| Գ | 4-5 | 50-74 | Բարելավման կարիք ունեցող |
| Դ | 1-3 | 1-49 | Անընդունելի |
| Ե | 0 | 0 | Ակադեմիական ազնվության խախտում, աշխատանքի բացակայություն |

Հավելված 5: ՄԲԴԾ-ի և ազգային ծրագրի ամփոփիչ գնահատումների և քննությունների գնահատականների սահմանները

| Գնահատականների սահմանները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՄԲԴԾ | % | Հեղինակային ծրագիր | | IB DP | % | Հեղինակային ծրագիր |

| IB DP | | | | ՄԲԴԾ | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7 | 88-100 | 10 | | 3 | 43-49 | 6 |
| 6 | 77-87 | 9 | | | 33-42 | 5 |
| | 75-76 | 8 | | 2 | 21-32 | 4 |
| 5 | 66-74 | 8 | | | 18-20 | 3 |
| | 62-65 | 7 | | 1 | 12-17 | 3 |
| 4 | 55-61 | 7 | | | 4-11 | 2 |
| | 50-54 | 6 | | | 1-3 | 1 |
| | | | | 0 | 0 | 0 |

Հավելված 6: ՄԲԴԾ-ի գնահատման ստանդարտացման ձևանմուշ

Առարկայական խումբ, առարկա ______ _________________________________

Գնահատում/ Առաջադրանքի ձև ________ ________________________________

Ամսաթիվ__________________________________________________________

| Սովորող | Ուսուցիչներ | Նախնական գնահատական | Վերջնական գնահատական | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

Ուսուցիչ_____________________________________, Ստորագրություն______________________

Ուսուցիչ _____________________________________, Ստորագրություն _____________________

Ուսուցիչ _____________________________________, Ստորագրություն _____________________

Հավելված 7. Տարբերակների վերաhսկման մատյան

| Տարի | Փոփոխություններ | Պատասխանատու կողմեր | Հաստատում |
|---|---|---|---|
| 2025–2026 | Քաղաքականությունը նախատեսված է տարեկան վերանայման համար. կատարվել են թարմացումներ՝ համահունչ ՄԲ/ՄԴԽ (IB/CIS) առաջիկա գնահատման պահանջներին, տեխնոլոգիական ինտեգրմանը (ManageBac, Turnitin, էլ. պորտֆոլիոներ), ներառականության հարմարեցումներին, առարկայական պահանջներին, ավելացվել են ՄԲ ԴԾ պաշտոնական քննությունների վերաքննությունների և «Արդյունքների վերաբերյալ հարցման» (EUR) ընթացակարգերը, ինչպես նաև ներառվել են մանրամասներ պարգևների համակարգի վերաբերյալ (Ոսկե/Արծաթե/Փայլուն): | ԴԾ համակարգող, ԴԾ մանկավարժական ղեկավարության խումբ | Տնօրենների խորհուրդ |

| | | | |
|---|---|---|---|
| 2024–2025 | Ավելացվել են բաժիններ սովորողի անդրադարձի, ներքին գնահատումների օրացույցի, քաղաքականության վերանայման գործընթացի, գնահատման համակարգի հստակեցումների վերաբերյալ, թարմացվել են առարկայական պահանջները և ուժեղացվել քաղաքականությունների միջև կապերը, ինչպես նաև թարմացվել են քաղաքականությունները՝ կապված փորձնական քննություններին չներկայանալու հետ: | ԴԾ համակարգող, ԴԾ մանկավարժական ղեկավարության խումբ | Տնօրենների խորհուրդ |
| 2023–2024 | Թարմացվել է գնահատման համակարգը. այն համահունչ է ՄԲ ակադեմիական ազնվության նոր քաղաքականությանը, թարմացվել են քաղաքականությունները՝ կապված ձևավորող գնահատումներին չներկայանալու հետ: | ԴԾ համակարգող, ԴԾ մանկավարժական ղեկավարության խումբ | Տնօրենների խորհուրդ |
| 2022–2023 | Վերանայվել է հաշվետվությունների համակարգը, ավելացվել են ծնողական հանդիպումների ընթացակարգերը: | ԴԾ համակարգող, ԴԾ մանկավարժական առաջնորդություն | Տնօրենների խորհուրդ |